

A E
9044

ՀՀՀ - ՀՀՀ թաղանք

Հայաստան, 1902թ.

ԱՐԴ ԱՐԴ ԹԱՂՎԱԾ

H 9044



Վաղարշապատ

Տպարան Մայր Արքույթ Մերոյ Եջմիածնի

1902

Дозволено Цензурою 2 Января 1902 г. г. Тифлисъ

ՈՂՋ ՈՂՋ ԹԱՂՎԱԾ

Ակովտիայի և Բրետանի ծովեղաց
 եայ կողմերում երբեմն մի տարօրի-
 նակ երեսյթ է նշմարվել։ Այդ կող-
 մերում ծովի տեղատառութեան ժամա-
 նակ ճանապարհորդը կամ ձինորսը
 ծովի եղերքովը, բայց ջրի ափիցը բա-
 ւական հեռու գնալիս, մի քանի վայր-
 կեանից յետոյ յանկարծ նկատում
 է, որ գժուարաւ է առաջ դնում, կար-
 ծես թէ ոտներին կուսը է փակցրած
 և այդ պատճառով ոտները դետնին
 են կողչում։ Նա կարծում է, թէ ոտի

տակինը աւաղ չէ, այլ կաւ է: Ծովեղը
բոլորովին չոր է, բայց և այնպէս նրա
ոտների թողած ամեն մի հետքը խո-
կոյն լցվում է ջրով Աչքը մի որեւ է
տարբերութիւն չէ նկատում: Անսահ-
ման հարթավայրը շիտակ և ուղիղ ըն-
կած է՝ լայնագիր, աւաղը ամեն տեղ
միենոյն կերպարանքն ունի: Մարդ չի
կարողանում պինդ ու հաստատ տե-
ղերը որոշել անհաստատներիցը: Ծո-
վային մանր, կայտառ մժեզների խըմ-
բակներն խաղում և պարում են ճա-
նապարհորդի ոտների մօտերը: Նա
միշտ աւելի առաջ է գնում և ոտնե-
րով աւելի արտգ քայլեր առնելով
ուզում է շտափ հաստատ եղերքին
հասնել: Նա բնաւ չէ վախենում, և ին-
չու վախենայ: Միայն զգում է, որ
քանի գնում է, քայլերը աւելի ծան-
րանում են: Յանկարծ ոտները սկսում

Են 4-5 մատնաշափի խրվիլ աւաղի մէջ։
 Արդեօք ուղիղ ճանապարհիցը սխալ-
 վել է։ Նա կանգ է առնում, որ հաս-
 կանայ, թէ ուր է լնկել. մէկ նայում
 է իր ստներին—բայց դրանք արդէն
 թաղված են աւաղի մէջ։ Նա ստները
 դուրս է քաշում և ուղում է ետ
 դառնալ. մի քայլ ետ է դառնում,
 բայց էլ աւելի խորն է խրվում։ Աւա-
 զը արդէն սրունքներին է հասնում։
 Նա ցատկում է դէպի աջ, աւազը
 հասնում է սրունքներից բարձր. դէ-
 պի ձախ է դառնում, աւազը բարձրա-
 նում է մինչեւ ծունկերը։ Հիմայ նո-
 սարսափելով հասկանում է, որ ծովի
 ափերումը տեղափոխող աւազակոյտի
 մէջ է լնկել, որի մէջ ոչ մարդը կա-
 րող է ման գալ և ոչ էլ ծուկը լողալ։
 Այդ խեղճը եթէ իր վրա մի որհ է
 ծանր բան է կրում։ Նաւերը վտանգի


հանդիպելիս արածի պէս՝ իր վրայից
 գէն է գցում, որ թեթևանայ։ Սա-
 կայն արդէն ուշ է։ Աւազը բռնել է
 նրա ծունկերը. նա կանչում է և գըլ-
 խարկովը կամ թաշկինակովը նշաններ
 անում. բայց աւազը քանի գնում, ա-
 ւելի վեր է բարձրանում։ Եւ եթէ ծո-
 վեզը անապատ է, կամ բնակութիւ-
 նից հեռու, կամ տեղացիները անդութ-
 մարդիկ են և մօռերը մի աղասող չէ-
 լինում, մարդը կորած է, նա անապատ-
 ճառ ողջ ողջ կը թաղվի աւազի մէջ։
 Նա գատապարտված է սոսկալի, բայց
 անխուսափելի կերպով աւազի մէջ կտ-
 մաց կամաց կենդանի թաղվելու, և
 այդ թաղվելը նա ոչ կարող է արգելել
 և ոչ էլ շուտով վերջ տալ նրան. նա
 պէտք է ժամերսվ տանջվի, չարչարվի,
 որչափ էլ ուժեղ, զօրաւոր, առողջ և
 աղատ մարդ լինի, նա և կարծէ թէ իր

ոտների վրա է կանգնած։ Այդ թշուառ
 մարդը միշտ աւելի խորն է թաղվում։
 ամեն մի ջանք և ամեն մի շարժում,
 որ նա անում է որպէս զի աղատվի,
 և ամեն անդամ, որ նա օդնութիւն է
 աղաղակում, ել աւելի է խրվում թաց
 աւազի մէջ, կարծես թէ մահը իր
 բոնած որսին էլ աւելի ամուր է գըր-
 կում նրա՝ աղատվելու նպատակով ա-
 րած ջանքերը պատժելու համար։ Սա
 մի այնպիսի թաղում է, որի միջո-
 ցով մարդու կամաց կամաց կուլ է գը-
 նում երկրի մէջ, բայց բաւական ժա-
 մանակ ունի հորիզոնը, ծառերը, կա-
 նաչ գաշտերը, տափարակ գաշտումը
 եղող գիւղից գուրս եկող ծուխը, նա-
 ւերի առագաստները, թուչող ու երգող
 թոշունները, արեգակը, երկինքը ևն.
 զիտելու համար։ Ծովեղբեայ աւաղը
 գառնում է նրա համար մի գերեզ-

ման, որը աստիճանաբար վեր է բարձրանաւմ երկրի խորքերից։ Ամեն մի բոպէն նրա համար այդ գերեզմանը աւելի է խորացնաւմ։ Եթէ այս գըժքախոր ուղում է նստիլ կամ պառկիլ։ Եթէ փորձում է սողալ, նրա ամեն մի շարժումը նրան աւելի խոր է թաղում, եթէ փորձում է կանգնել, ել աւելի է խրվում, նա զգում է, որ երկիրը իշրան կուլ է տալիս։ Նա աղաղակում է, գոռում է, բղավում է, յուսահատած նայում է ամպերին—սակայն բոլորն էլ իղուր։ Աւաղը հասնում է փորին, յետոյ կուրծքին։ Հիմա միայն մարմնի վերի մասն է աղատ։ Նա բարձրացնում է իր ձեռները, կտտաղած գոռում է, եղունգները խրում է աւաղի մէջ, ուղում է, որ այդ փոշին իրան պահէ, արմուկների վրա է կըոթնում, որ այս թայ—կտկուղ փոսիցն

աղասիլիւ Երեխայի ողէս հեծեծում է,
կատաղում է. բայց աւազը միշտ աւելի է բարձրանում, հասնում է ուսերին, հասնում է վղին. միայն Երեսն է, որ Երեսում է Նա բացում է իր բերանը, որ մի վերջին անդամ էլ պոռայ, բայց աւազը բերանի մէջ է լրցվում և—ձայնը կտրվում է. Դեռ մի քանի վայրկեան աչքերը բաց են բայց նրանք էլ են շուտով աւազով լցվում, աշխարհը մթնում է նրա գլխին. ճառկատը քանի դնում փոքրանում է. մազերն են, որ մի քիչ դուրսը Երեւում էին. Զեռները սկսում են աւազը խառնել, մի փոս փորել: Մի քիչ շարժվելուց յետոյ դրանք էլ են անհնհետանում: Աւազ. խեղճը ողջ ողջ կուլ գնաց. կորաւ:

Այսպէս է նկարագրում Վիկտօր Հիգօն:



Սիրելի ընթերցող. դուցէ դու ևս
այդ խեղդվող մարդը։ Մեղքը այն
շրջող թաց ու կակուզ աւազակոյտն է,
որ կամաց կամաց վեր է բարձրաւ
նում և մարդուս բոլոր ընդունակու-
թիւնները սոսկալի ուժով կլանում։
Մեղքը խարող և խորամանդ է. նա
չէ զգուշացնում։ Նա հրապուրում է,
փաթաթվում է մարդուն, կարծես թէ
մի հաստատ կայարան է խոստանում,
որի վրա կարող ես անվտանգ կանդ-
նել։ Եղանակը գեղեցիկ է և հանգա-
մանքները ժպառում են. կարծում ես,
որ յաւիտեան չէ կարող վտանգ լինել
և վտահօրէն դնում ես առաջ։

Ստկայն շուտով տեսնում ես, որ
քեզ շրջապատել է մի ահռելի զօրու-
թիւն, որի ճանկերը օր օրի վրա տես-
լի են ուժովանում և վերջը քեզ բու-
լորովին շղթայակապ են անում։ Ինը

նաովութիւն, բարկութիւն, նախանձ,
ադահութիւն, հողարտութիւն, ապօրի-
նի ցանկութիւններ և մոլութիւններ
տիրում են մարդու վրա, և նա չէ
ճանաչում իր խակական վիճակը Բայց
այն, որ առաջ իրեւ մի բարի ճանա-
պարհ էր Երեւամ, գառնում է մի
սարսափելի ահաւոր գերեզման։ Մար-
դը յանկարծ արթնանում է և սկսում
է իր վիճակը հասկանալ, դիմադրում
է, պատերազմում է մինչև մահը—
բայց ի զուրք Երերը յանկարծ ուրիշ
կերպարանք են ստանում։ Նա նայում
է հորիզոնին, Երկնքին, ծառերին,
կեանքին, բայց—մի մեռնողի աչքով։
Ամբողջ աշխարհը, որը ուրիշների հա-
մար միայն զուարժութեան, ուրախու-
թեան և ապահովութեան վայրն է,
նրա համար յանկարծ մութ քողով
ծածկվում է։ Հիմա նրա համար պարզ-

վել է, որ ինքը մեղաւոր է և որ մեղաքի վարձը մահն է։ Շարժուն տւազակոյալ յափշտակել է նրան. կեանքի մէջ մահը շրջապատել է նրան։

Խիզճն արթնացած մարդն է հառկանում, թէ որքան սարսափելի է մեղքի ոյժը։ Նո ուզում է գիմադրել, բայց էլ տւելի է խրվում. ամեն մի շարժում նրան տւելի խոր է ընկլինում։ Մարդուս բոլոր ջանքերը, որ նո անում է մեղքիցն աղատվելու համար, էլ տւելի են ցոյց տալիս նրան իր տկարութիւնը։ Որքան որ պատերազմում ես քո «Ես»-ի գէմ, նո կարծես առաւել ես է զօրանում։ Այն, անհընար է, որ մարդը ինքն իրան կարողանայ աղատել։ «Առանց ինձ ոչինչ չէք կարող անել», տսաց աշխարհքի Փրկիչը։

Ալրելի ընթերցող, եթէ այն ջրոտ

տւաղի մէջ ողջ ողջ թաղվող մարդու
աղաղակի վրա մի օգնական վաղեր,
գար, ձեռը նրան տար, նա ի՞նչ ուրա-
խութիւնով կը յափշտակէր այդ մեկ-
նած բաղուկը։ Ասկայն նրա աղաղա-
կը, պոռալը, դոչելը, յուսահատական
լացն ու կոծը ոչ ոք չէր լսում, և նա
կամաց կամաց մինչեւ վիզը, յետոյ
մինչեւ բերանը, մինչեւ ճակատը, դը-
լուխը և մազերը ողջ ողջ կուլ գնաց-
Մեղքն էլ քեզ այնպէս կուլ է տա-
լիս, և դու զգում ես, որ օր օրի
վրա աւելի և աւելի խոր ես խրվում
գէպի յաւիտենական կորստեան ան-
դունդը։ Բայց հիմա Յիսուս Փրկիչը
կանգնած է քո առջեղ և ուղում է
քեզ փրկել։ Բոնիր նրան և յանձնիր
քո անձդ նրա ձեռքը, և դու յաւի-
տեան փրկված կը լինիս.

ԹԱԻՆՊԱՐԱԿԱՆՆԵՐ

ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0046634

A I
9044